ծուցեալ զաղմուկ ռամկին, պատուիրեաց չվնասել ումեք 'ի Հայոց, և ինքն գրեալ զամենայն եղեալսն ազգ արար 'ի Կոստանդինուպոլիս, ՉԼԵ (1538)։

Սուլթան Սիւլէյման որդի Սէլիմայ արքայ Օսմանցւոց, ետ պարսպել շուրջանակի զերուսաղէմ քաղաք, որ կայր աւերեալ 'ի ժամանակէ անտի պատերազմացն Լատինաց, ապարանք խաչակիր ասպետաց, որ մինչեւ ցայս վայր կացեալ էր կանգուն. մերձ 'ի Ս. Յարութիւն, ետ քակել և կործանել զայն, զնիւթս և զքարինս նորա 'ի կիր արկանել 'ի գործ շինութեան պարսպին. կանգնեաց 4 հոյակապ դրունս 'ի 4 կողմն քաղաքին և զերկուս փոքր դրունս, եդեալ 'ի պատշաճաւոր տեղիս վերտարութիւն 'ի բարբառ Արաբացւոց օրինակ զայս։

امر بانشاء هذا السور المبارك مولانا السلطان المعظم والخاقان المكرم
مالك الروم والعرب والعجم السلطان سليمان بن سليم خان خلد الله
ملكه وسلطانه بتاريخ فى ربيع الاول سنة خمسة واربعين وتسعماية
من الهجرة النبوية عليه السلام

Շինեցաւ պարիսպս հրամանաւ մեծի Սուլթանին Սիւլէյմանայ որդւոյ Սէլիմայ, որ է Թագաւոր Յունաց, Արաբայ եւ Պարսից. պահեսցէ Աստուած զթագաւորութիւն և զիշխանութիւն նորին։ Ի Բէպիլ էվվէլ ամսոյ. 'ի թուին Հիճրէթի՝ ՉԼԵ (1538)։

Ի հոյակապ շինուածոց ապարանից խաչակիր ասպետաց. մի միայն կամարն արտաքին հիւսիսային դրան՝ զերծեալ յաւերանաց. կայ մնայ ամբողջ իւր պանծալի հնութեամբ՝ իսկ այլքն հանդերձ եկեղեցեաւ Ս. Աստուածածնի թաղեալ 'ի ներքոյ աւերակաց։

Յետ ժամանակի այլազգիք զմի մասն արարին գործարան խաղախորդաց, որ եւ յետոյ բարձաւ այն աղտեղութիւն միջնորդութեամբ քրիստոնէից։ Եւ 'ի ժամանակի մերում յորժամ եկն յայցելութիւն Ս. Քաղաքին գահաժառանգ որդին Գուլիէլմոս կայսեր Ալմանիոյ, եցոյց նմա զայն տեղի Հիւպատոս նոցին Տօքթօր Ռօզ, որոյ զքննութիւնն արարեալ էր կանխաւ, և 'ի վերադարձին 'ի Կոստանդինուպոլիս, խնդրեաց յԱպտիւլ Ազիզ Կայսերէ Թուրք